



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտ

Առարկան՝ Հիմնական առարկաներ

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգարիտ Ավետիսյան

*Ուսումնական հաստատություն՝ Ա. Հովհաննիսյանի անվան թիվ 194
հիմնական դպրոց*

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....	3
Ընտանիքի հոգեբանական բնութագիրը.....	4
Կոնֆլիկտի կառուցվածքային տարրերը.....	8
Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա և հնարավոր լուծումները.....	12
Եզրակացություն.....	16
Օգտագործված գրականության ցանկ.....	17

Ներածություն

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով:

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը:

Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել ընտանիքի հոգեբանության առանձնահատկությունները, կոնֆլիկտի ծագման և հարթման միջոցները:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է օրեցօր ավելացող ամուսնալուծություններով, երեխաների դժվար ինտեգրմամբ հասարակության մեջ, կոնֆլիկտների տարածվածության ու դրանց լուծման համար մշակվող ուղիներով:

Առօրյա կյանքում կոնֆլիկտները հաճախակի բնույթ են կրում: Բազմիցս է պատահում, երբ միաժամանակ մի քանի տեսակի կոնֆլիկտներ են ծագում: Հաճախ բարդ է նաև խուսափել կոնֆլիկտներից, թեև կոնֆլիկտից խուսափելուց ոչ պակաս կարևոր է կարողանալ վերահսկել դրանք և գիտենալ կոնֆլիկտների լուծման խաղաղ ճանապարհները:

Կոնֆլիկտը, որպես «մարդկային պատմության մշտական գործոն», ընկած է աշխարհի զարգացման հիմքում: Յանկացած հասարակության պատմություն կոնֆլիկտների պատմություն է, որը ուղեկցվում է հոգեբանական սթրեսով, նյութական, մշակութային, մարդկային կորուստներով:

Ընտանիքի հոգեբանական բնութագիրը

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Զուգընկերների դերերը և՛ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. «Ընտանիքը

հասարակության բջիջն է»: Այսինքն՝ հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ ե՞րբ է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե՛ ամուսինների, թե՛ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն՝ առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ:

Ամուսնությունը հենված է դրդապատճառների համակարգի վրա: Դրդապատճառները հենված են գիտակցության աստիճանի վրա և իրականացնում են անձի կյանքի կարևոր հարաբերությունները աշխարհի նկատմամբ, կազմում են մարդկային պահանջմունքների հիերարխիայի հիմքը: Ընտանիքի հոգեթերապիայի մասնագետ Հենրի Դիքսը դասակարգել է ամուսնության հետևյալ դրդապատճառները՝

- Սերը
- Մշտական սեքսուալ զուգընկեր ունենալու ցանկությունը
- Հոգեբանական պատճառները
- Երեխա ունենալու ցանկությունը
- Կենցաղային խնդիրների լուծումը
- Ստեղծված հանգամանքները:

Շատ մասնագետներ փորձել են պարզել, թե ինչ է սերը: «Միայն սիրո միջոցով և սիրո գիտակցության միջոցով է մարդը մարդ դառնում», - ասել է Ֆ.Շլեգելը: Սերը մեր իսկական մարդկային բնույթի մի մասն է, այն հզորագույն զգացմունքներից մեկն է հույզերի ոլորտում, եթե ոչ ամենահզորը: Սերը խորը կապվածություն է երկու մարդկանց միջև: Սերը հաճախ շփոթում են սիրահարվածության հետ: Հասուն սերը զգայական հակման, մարդկային ջերմության և ուրիշի հետ ինտիմ մտերմության հոգեկան անհրաժեշտության օրգանական միասնությունն է: Սիրահարվածն ապրում է ուժեղ և վառ զգացմունք, բայց այն կենտրոնացված է գլխավորապես իր և իր ապրումների վրա, նա պահանջկոտ է, անզիջում և էգոիստ: Իսկ հասուն սիրո մեջ ծանրության կենտրոնը տեղափոխվում է զուգընկերոջ վրա: Մարդը նախ և առաջ մտահոգվում է նրա մասին, ում սիրում է, նրա հետաքրքրությունների, բարօրության, երջանկության և ինքնաարտահայտման մասին՝ ողջ ուժերով նպաստելով

վերջիններիս իրականացմանը: Ուրիշ մարդու մասին մտածելու ունակությունը, տալով ուրախություն ապրելու ունակությունը հասուն սիրո պարտադիր ուղեկիցներն են:

Սերը քաղց է ինչ-որ մեկի հանդեպ, մարմնի և հոգու ամենասուր քաղցը: «Սիրել՝ նշանակում է հաճույք ապրել, երբ տեսնում ես, շոշափում, զգում բոլոր զգայարաններով այն էակին, որին սիրում ես», - ասել է Ստենդալը: Սերը կառույց է մեր բոլոր խորքային պահանջմունքների և զգայությունների վրա: Դա մարդկային ուժերի ամենասեղմ, ամենախտացված միաձուլումն է՝ մարմնական և հոգևոր, գիտակցական և ենթագիտակցական ուժերի:

Սիրո ամենաբարձրագույն թռիչքը, նրա ամենապայծառ դրսևորումը հոգիների միաձուլումն է: Հոգու գաղտնարաններում առաջանում է ցավ ուրիշ մարդու համար այպես, ինչպես կցավես ու կանհանգստանաս ինքդ քեզ համար: Սերն ուշադրություն է, բարության, համբերություն, քնքշություն, երախտագիտություն, հարգանք և նվիրվածություն: Նա, ով սիրում է, ընդունում է իր սիրելիի հրապուրանքները, որպես իր սեփականները: Նա ընդունում է ուրիշին այնպես, ինչպիսին նա կա և հավատում է նրան: Նա, ով սիրում է, ունակ է զիջելու և ներելու: Ներումը իսկական սիրո ակտ է: Իսիստ տարբեր է տղամարդու և կնոջ վերաբերմունքը սիրո նկատմամբ: Կինը հանճարեղ է իր սիրո մեջ, նրա վերաբերմունքը սիրո նկատմամբ ունիվերսալ է. նա սիրո մեջ ներդնում է իր բնույթի ամբողջ լիարժեքությունը: Իսկ տղամարդն ավելի շուտ տաղանդավոր է սիրո մեջ, քան հանճարեղ: Նա իրեն ամբողջությամբ չի դնում սիրո մեջ և ամբողջությամբ կախված չէ այդ սիրուց: Կնոջ սիրո պահանջներն այնքան անսահման են, որ երբեք չեն կարող բավավարարվել տղամարդու կողմից: Սերը դրականորեն է ազդում ընտանեկան հարաբերությունների բնույթի վրա այն ժամանակ, երբ զուգընկերները փոխադարձաբար կիսում են միմյանց դիրքորոշումներն իրենց համար կարևոր երևույթների, իրադարձությունների և արարքների հանդեպ: Ինչպես նշել է Սենտ-Էքզյուպերին. «Իսկական սերը միմյանց աչքերին նայելու մեջ չէ, այլ՝ միասին նույն ուղղությամբ նայելու մեջ»: Ամուսնական կյանքի հաջողության վրա ազդում է ամուսինների համատեղելիությունը բոլոր ոլորտներում, երբ մարդիկ ոչ միայն համատեղվում են, այլև լրացնում մեկը մյուսին:

Սոցիալ-հոգեբանական համատեղելիությունը ենթադրում է որոշակի ընդհանրություն, որը կարելի է դիտարկել երեք մակարդակներում.

1. Բարձրագույն և առավել բարձր մակարդակը արժեքակողմնորոշիչ միասնությունն է՝ կենսական արժեքների, ձգտումների, իդեալների, հետաքրքրությունների, համոզմունքների միասնությունը, ինչպես նաև աշխարհայացքային միասնությունը:

2. Ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցվածությունը մարդկանց՝ իրենց դերերի և ֆունկցիաների մասին պատկերացումների համաձայնեցվածությունն է տվյալ միության մեջ:

3. Մարդկանց անհատական-հոգեբանական բնութագրերի համատեղելիությունը:

Հետաքրքիր է, որ բարեհաջող զույգերը, որոնք ունեն կայուն և առավելագույնս համատեղելի հարաբերություններ, տարբերվում են հակառակ խառնվածքով. դյուրագրգիռ խոլերիկը և հանգիստ ֆլեգմատիկը, ինչպես նաև մելանխոլիկը և կենսուրախ սանգվինիկը կարծես լրացնում են իրար: Եվ հակառակը՝ երկու խոլերիկներից կազմված ընտանիքին կարող է սպասվել բարձր կոնֆլիկտայնություն ամուսինների պոռթկունության և անզսպության պատճառով: Պարզվում է՝ առավել ունիվերսալ զուգընկերներ են համարվում ֆլեգմատիկները, քանի որ նրանք հարմարվում են խառնվածքի ցանկացած տիպի հետ, բացի սեփականից: Չկա այնպիսի ամուսնական զույգ, որտեղ ամուսինները լիովին նման լինեն միմյանց: Սակայն պետք է նկատի ունենալ, որ համատեղ կյանքն աստիճանաբար հարթում է կտրուկ տարբերությունները ամուսինների հետաքրքրությունների, նախասիրությունների, հայացքների միջև, և առաջանում է գնահատականների ու վերաբերմունքի ընդհանրություն: Եթե տարբերությունները շատ են, պետք է հաբերել ու նաև ձգտել ավելի լավ հասկանալ ամուսնուն: Երբ ամուսիններն իրար լավ են հասկանում, նրանց բնավորության կամ խառնվածքի, վարքագծի խութերն ուժեղ չեն բախվում և խանգարում միմյանց: Երբ ամուսիններն անգամ իդեալական միասնության դեպքում հանդուրժում են միմյանց ինքնությունն ու անկախությունը, ապա զբաղմունքների տարբերությունը, բնավորությունների զանազանությունը չեն կարող տևական անջատման շարժառիթ ծառայել:

Եվ ընդհանրապես ամուսնության սկզբում կյանքը զարմանալիորեն հեշտ և ուրախալի է թվում, գրեթե իդեալական: Ի վերջո ռոմանտիկ հիացումներին փոխարինելու են գալիս կենցաղը, առօրյան՝ իր անխուսափելի սթրեսներով: Կենցաղն ամենամեծ փորձությունն է երիտասարդ ամուսինների համար: Միմյանց լրիվ բացահայտումն ու «գունազրկումը» երկրորդ ծանր քննությունն է նորապսակների համար, իսկ երրորդը՝ դերերի, պարտականությունների բաշխումը: Աստիճանաբար նրբազգացությունը, քնքշությունը, հաճոյախոսությունները, երախտագիտության արտահայտությունները քչանում են՝ տեղ տալով փոխադարձ քննադատություններին: Հաճախ զուգընկերները դառնում են ավելի պակաս ուշադիր միմյանց նկատմամբ և ավելի էգոիստ, քան առաջ: Սառած զգացմունքները կարող են բազմաթիվ ընտանեկան կոնֆլիկտներ ստեղծել, ուստի սերն ամուսնության մեջ մշտապես պահպանել: Միաժամանակ պետք է հասկանալ և գիտակցել, որ մինչամուսնական, պատանեկան սերը և ամուսնական սերը նույնը չեն: Ներդաշնակ ընտանիքներում մարդիկ միշտ լսում են միմյանց հույզերն ու պահանջմունքները, նրանք բարի են, քնքուշ, հավատարիմ ու համբերատար: Նրանց հարաբերությունները հիմնված են հարգանքի, փոխադարձ օգնության, ներողամտության վրա: Երջանիկ ամուսինների կյանքում մշտապես տեղի է գտնվում ուշադրության նշանների համար, որոնք արտահայտում են ջերմություն և հոգատարություն միմյանց նկատմամբ:

Կոնֆլիկտի կառուցվածքային տարրերը

Կոնֆլիկտ բառը ներմուծվել է լատիներենից «կոնֆլիկտուս» բառից (conflictus-բառացի նշանակում է բախում): Կոնֆլիկտը միջազգային այն տերմիններից է, որը թարգմանության կարիք չունի, բայց իմաստը հետևյալն է, այն հակադարձ նպատակների, հայացքների, ձգտումների, միտումների, դրդապատճառների բախում է, որի հետևանքով անձն ապրում է հոգեկան աններդաշնակություն, պրոբլեմային վիճակ: Ռուսաստանում կոնֆլիկտ բառն օգտագործվել է 19-րդ դարում, իսկ 20-րդ դարում այն արդեն տարածության լայն շրջանակ ուներ:

Մարդն իր ողջ կյանքի ընթացքում չի կարող զերծ մնալ կոնֆլիկտներից: Քանի դեռ բախում է նրա զարկերակը, քանի դեռ կա զարգացում, փոփոխություն, մշտապես կլինի նաև կոնֆլիկտ, բախում, հակասություն: Բախումներն անկասկած, լավ բանի չեն հանգեցնում, խանգարում են ընդհանուր գործին, խոչընդոտում դրա իրականացման փոխհամաձայնեցված ջանքերը, խաթարում են մարդկային փոխհարաբերությունները, առաջացնում լարվածություն և ցնցումներ, որոնք բացասաբար են անդրադառնում մարդու առողջության, հոգեկան աշխարհի վրա: Ուստի շատ մարդիկ հիմնականում խուսափում և վախենում են բախումներից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հակամարտող կողմերը չեն սիրում «կոնֆլիկտ» անվանել այն, ինչ տեղի է ունենում իրենց միջև: Նրանք նշում են. «Մենք չենք վիճում, պարզապես մեր կարծիքները չեն համընկնում»: Կարելի է ենթադրել, որ գոյություն ունեն կոնֆլիկտի դրսևորման տարբեր ձևեր: Սակայն կոնֆլիկտը չի կարող ունենալ միայն բացասական հետևանքներ: Հաշտ ու հանգիստ ապրելը ողջունելի է, բայց կյանքն առանց փոփոխությունների, զարգացման շատ ծանձրալի է: Իսկ վերջիններս առաջանում են հնի ու նորի, վատի ու լավի, նպատակների, հետաքրքրությունների բախման հետևանքով:

Կոնֆլիկտի սկզբնապատճառները - Կոնֆլիկտի սկզբնապատճառները հանդիսանում են հիմնարար գործոն, որի միջոցով հնարավոր է ընտրել կոնֆլիկտի կանխարգելման ճիշտ «գործիքները» և այդ գործողությունների հիմնական թիրախները:

Մայքլ Բրաուն առանձնացնում է կոնֆլիկտի դրդապատճառների երկու հիմնական տարատեսակ՝

- հիմնարար սկզբնապատճառներ կամ նպաստող պայմաններ
- հավելյալ սկզբնապատճառներ կամ դրդիչներ

Հիմնարար սկզբնապատճառները ստեղծում են այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են կոնֆլիկտի զարգացման համար: Դրանք կարող են լինել կառուցվածքային, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կամ էլ ընկալման խնդրին առնչվող: Այս նախապայմանների առկայությունը կանխորոշում է, թե որքան է տվյալ հասարակության կոնֆլիկտայնության հակումը, սակայն այն չի նշում, թե երբ և հատկապես ինչ պայմաններում տվյալ կոնֆլիկտը կվերաճի բռնի

հակամարտության: Շատ հաճախ կոնֆլիկտները հանդիսանում են սոցիալական դինամիկայի ինտեգրալ մասը և հետևապես նաև սոցիալական և քաղաքական զարգացման հիմնական դրդիչները: Միայն այն կոնֆլիկտներն են վտանգավոր տվյալ հասարակության համար, որոնք վերաճում են ապակառուցողական և բռնի կոնֆլիկտների:

Դրդիչները կամ հավելյալ սկզբնապատճառները նպաստում են կոնֆլիկտի էսկալացիային և նախորոշում, թե երբ տեղի կունենա կոնֆլիկտի վերաճումը բռնի հակամարտության: Սրանք հանդիսանում են այն հիմնական փոփոխականները, որոնք անհրաժեշտ է իմանալ էսկալացիայի վերահսկման և կանխարգելիչ գործողությունների համար: Հավելյալ սկզբնապատճառները կարելի է անգամ սահմանել որպես հիմնարար սկզբնապատճառային իրավիճակների կտրուկ կամ անսպասելի փոփոխություն:

Կոնֆլիկտի փուլերը - Դոնալդ Ռոթշայլդը և Չանդրա Լեխ Սրիրամն առաջարկում են կոնֆլիկտի 5 փուլերից բաղկացած մոդելը: Այդ փուլերն են՝

1. կոնֆլիկտի պոտենցիալ փուլը - Այս փուլում կոնֆլիկտն առկա է, սակայն բավականին ցածր մակարդակով: Կառուցվածքային գործոնները նպաստում են կողմերի տարանջատմանը սոցիալ-տնտեսական, մշակութային կամ քաղաքական սահմանազատումներով: Էլիտան ձգտում է ձևավորել խմբեր, որոնք դեռևս չունեն հստակ կազմակերպվածություն: Կանխարգելիչ գործողություններն այս փուլում ռիսկային չեն և ունեն արդյունավետության մեծ հնարավորություններ:

2. կոնֆլիկտի զարգացման փուլ - Այս փուլում շահերի և կոնֆլիկտող խմբերն առավել ընդգծված են: Միջխմբային հարաբերությունները քաղաքականացված են և բնակչության բևեռացվածությունն այնքան մեծ է, որ անգամ էլիտան, որը չէր արձագանքում առկա հակասություններին, ստիպված է լինում որոշակի հակազդեցություն ցուցաբերել: Երբ խմբերի միջև բևեռացվածությունը մեծանում է, բռնության հնարավորությունը ևս մեծանում է, հանգեցնելով փոքր բախումների: Կանխարգելիչ գործողությունների ծախսերն այս փուլում մեծանում են, սակայն արդյունավետության մակարդակը մնում է բարձր:

3. կոնֆլիկտի էսկալացիայի փուլ և վերջապես հետ-կոնֆլիկտային փուլ, որն ընդգրկում է - Խմբերի շրջանում տնտեսական, սոցիալական կամ քաղաքական

պայմանների փոփոխության դեպքում հնարավոր է դառնում կոնֆլիկտի սրմանն ականատես դառնալ: Զանգվածային բռնության սկիզբը հանդիսանում է կոնֆլիկտի կարծրացման հիմքը: Բռնությունը զարգանում է, կողմերը դադարում են վստահել միմյանց. առաջանում է կոնֆլիկտի լուծման անհնարինության զգացումը: Այս փուլում միջամտությունը հանդիսանում է բավականին ռիսկային և ծախսատար, սակայն վերջինիս առկայության դեպքում հնարավորություն է առաջանում կանխարգելել բռնության հետագա զարգացումը և խմբերի միջև հարաբերությունների հիմնարար վատթարացումը:

4.անվտանգության կառուցակցման - Այս փուլում տեղի են ունենում մի շարք գործընթացներ, որոնցից առավել էականն են հանդիսանում բնակչության զինաթափումը և դեմոբիլիզացիան:

5. ինստիտուցիոնալ կառուցակցման փուլերը - Այս փուլում սոցիալական, քաղաքական և տնտեսական վերակառուցումը հանգեցնում է միջխմբային հարաբերությունների վերականգնմանը:

Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա և հնարավոր լուծումները

Սուրբ Գրքում՝ Աստվածաշնչում ընտանիքի մասին խոսվում է 32 անգամ: 12 սուրբ մարգարեներից մեկը՝ Միքիան Հին Կտակարանի Միքիայի գրքի 7:6 գլխում ասում է. «Որովհետև որդին անարգում է հորը, աղջիկը վեր է կենում իր մոր վրա, հարսն իր սկեսրի վրա, մարդիս թշնամիներն իր ընտանիքն են»: Ճիշտ նույն միտքն է ներկայացվում նաև Նոր Կտակարանում՝ Մատթեոսի 10:36 գլխում: Ընտանիքն այն «լաբորատորիան» է, որտեղ ձևավորվում է անձը: Եվ ինչպես ասում էր 19-րդ դարի ռուս դրամատուրգ և փիլիսոփա Լև Տոլստոյը՝ բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար և յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի: Ընտանիքում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն մեծապես նպաստում է երեխայի զարգացման և աշխարհայացքի ձևավորման վրա: Կարևոր է որոշել, թե տվյալ իրադարձությունն ինչպիսի՞ հետևանքներ կարող է թողնել և որչա՞փ է դրա ազդեցությունը, կարճաժամկետ է, թե՞ երկարաժամկետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան փոփոխությունները (հատկապես ամուսնալուծություն, ընթացիկ տարաձայնություն կամ նոր ամուսնություն) էապես փոխում են երեխայի վարքը, երբեմն դարձնում ագրեսիվ, երբեմն՝ ինքնամիտ կամ ինքնուրույն:

Ընտանեկան կայուն համակարգի բաժանումը (ամուսնալուծությունը կամ ընտանիքի անդամի կորուստը) առաջացնում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- եկամտի փոփոխություններ (սոցիալական-ֆինանսական վիճակի ճգնաժամ)
- հայրական / մայրական բացակայություն (հետևաբար, երեխայի վրա ազդեցության թուլացում)
- անբավարար մայրական / հայրական հոգեկան առողջություն (առանձին դեպքերում)
- միջանձնային տարաձայնություններ, որոնցից կարող են ծագել նորերը
- ցածր վարկանիշային ընտանեկան մթնոլորտ, ծնող-երեխա հարաբերությունների արագ անկում
- կրթության անցում հետի պլան հանուն նյութաֆինանսական միջոցների հայթայթման:

Շատ դեպքերում երեխայի դաստիարակության գործում ի հայտ եկող խնդիրները պայմանավորվում են ոչ միայն ընտանեկան բաժանումներով, այլև ծնողների զբաղվածության մակարդակի աճով, որի արդյունքում հետին պլան են մղվում բազում կարևորագույն հարցեր:

Աշխարհագետների շարունակական ուսումնասիրման տակ են աշխարհի բնակչության կառուցվածքն ու աճը ներկայացնող սեռատարիքային բուրգերը, որոնք ցույց են տալիս, որ արագ տեմպերով զարգացող և զարգացած երկրներում ահագնանում է ծնելիության մակարդակի անկումը, առողջապահական համակարգի աստիճանական զարգացմանը զուգընթաց աճում է կյանքի միջին տևողությունը և բնակչությունը գնում է դեպի ծերացում: Վերջին տասնամյակներում փոխվել են ընտանիքին առնչվող շատ կարծրատիպեր: Ներկայումս համաշխարհային հասարակության 62%-ը հաջողակ է համարում այն ամուսնությունը, որում երկու կողմերն էլ աշխատում են (ըստ որում, այլևս չի նշվում ամուսինների սեռային պատկանելիությունը): Աշխարհի ամուսնացած կանանց 28%-ն ունեն լավագույն կրթություն, հետևաբար, նրանք ինքնամոռաց նվիրվել են իրենց կարիերային:

Շատ դեպքերում ընտանեկան անտարբերությունը ծնում է նոր կոնֆլիկտ, որը ստանում է շարունակական բնույթ: Դա երեխաների մոտ հետզհետե առաջացնում է զայրույթ, անհանգստություն, տխրություն, առողջական խնդիրներ, որոնց մասին նրանք դադարում են բարձրաձայնել, կարծելով, որ ընտանիքում այդ պահին կան ավելի կարևոր հիմնահարցեր, քան իրենք են: Նաև կորում է ինքնավստահության ու անվտանգության զգացումը, որի երաշխավորները հենց ընտանիքի մեծահասակներն են: Հատկանշական է քնի խանգարումն ու դպրոցում կենտրոնանալու դժվարությունը: Սա աստիճանաբար փոխարկվում է միջավայրի երևույթների նկատմամբ անտարբերության, ապա անվստահության առաջացման, գիտության, արվեստի, սպորտի նկատմամբ հետաքրքրասիրության կտրուկ նվազման և հետագայում կարող է արտահայտվել ագրեսիայի, նախանձի ու թշնամանքի (քանզի նա հետ է մնում մյուսներից), հակահասարակական պահվածքի, հանցագործության և վանդալիզմի դրսևորումներով:

Ահա թե ինչու, երբեմն վատ ճանապարհով սկսում են գնալ այն ընտանիքների երեխաները, որտեղ թվում էր թե ամեն բան հիանալի է, մինչդեռ խնդիրն

աշխատանքով պայմանավորված անտարբերության կամ դրանից բխող կոնֆլիկտների մեջ է: Այս ամենից բացի կոնֆլիկտային ընտանիքների երեխաները մեծ հաշվով խնդիրներ են ունենում միջանձնային հարաբերություններում, դժվարանում են լուծումներ գտնել և շատ անգամ էլ դրանք փնտրում են վատ միջավայրում: Այս ամենը բացասաբար են անդրադառնում պատանեկության և հասունության անցման տարիքում նրանց ռոմանտիկ հարաբերությունների վրա, քանզի ընտանեկան բախումներն իրենց պատճառահետևանքային կապերով նպաստում են այն բանին, որ երեխան ավելի բացասաբար ընկալի սոցիալական միջավայրը, ունենա վատ տպավորություններ և պատկերացումներ ընտանեկան հարաբերությունների և արժեքների մասին:

Հատկանշական է, որ սթրեսն առաջացնում է որոշակի ֆիզիոլոգիական ռեակցիաներ, որոնք կարող են վնասել ուղեղի զարգացմանը: Երեխան կարող է նաև դիմագրավել դրան, շնորհիվ գենետիկական հատկանիշների կամ բաժր դիմադրողականության, թեև գիտական հետազոտությունները փաստում են, որ բոլոր դեպքերում ծնողական կոնֆլիկտն անդրադառնում է երեխայի ֆիզիկական զարգացման ու հոգեկերտվածքի ձևավորման վրա, անգամ եթե նա որդեգրված զավակ է:

Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը սովորաբար աստիճանաբար նվազում է միայն 2- 3 տարվա ընթացքում, սակայն կարող են մնալ նաև անդառնալի հետևանքներ:

Երբեմն, կոնֆլիկտը կարող է նաև որոշակի դրական ազդեցություն ունենալ, բարձրացնելով, ասենք, երեխայի իրավագիտակցությունը, արդարամտությունը կամ ընտանեկան կայունության կարևորության մասին գիտակցությունը, եթե այն ընթանում է ոչ բռնի, հանգիստ պայմաններում և կողմերը պատրաստակամորեն լսում են միմյանց, հայտնում դիրքորոշումները, որոնք բերում են խնդրի խաղաղ կարգավորման:

Կոնֆլիկտների հաղթահարման համար հարկավոր է իմանալ, որ

- պետք է զատել խնդիրը մարդուց,
- միշտ սպասել և միայն որոշ ժամանակ անց դատել սառը գլխով,

- հիշել, որ գաղափարը կայանում է ոչ թե փաստարկը շահելու, այլ հակամարտությունն ի վերջո լուծելու մեջ,
- հիշել, որ մյուս կողմում անձ է, ով պարտավոր չէ համաձայնել դիմացինի ամեն բառի հետ,
- պետք է սահմանել խնդիրը և երբեք չշեղվել այլ հարցերի ուղղությամբ, – պետք է խոսել ցածրաձայն, հստակ և ողջամիտ,
- հիշել, որ խելացի մարդը միշտ կարող է ելք գտնել:

Պետք է կարևորություն տալ ընտանեկան ավանդույթներին: Անկախ ստեղծված իրավիճակից երբեք չդադարեցնել երեխայի կրթության խիստ վերահսկողությունը, ապահովել նրա առողջ ժամանցը, շփումն ընկերների, կենդանիների հետ, կազմակերպել բազմաժանր ֆիլմերի դիտումներ, բազմաժանր երաժշտության ունկնդրումներ, ընթերցանություն և ձեռքի աշխատանքների պատրաստում, որոնք խթանում են երեխայի առողջ դատողության զարգացումը, բաժրացնում արժեհամակարգը, զբաղեցնում այնպես, որ նա երբեք էլ չնկատի առկա խնդիրը: Հմտորեն ներգրավել երեխային խնդրի դրական հանգուցալուծման մեջ և ապահովել ընտանիքի ու երեխայի կայուն զարգացումը

Եզրակացություն

Վերլուծելով հետազոտական աշխատանքի բովանդակությունը հասկացանք, որ հնարավորին չափ հարկավոր է խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, հատկապես երեխաների առկայության պարագայում, անխուսափելի կոնֆլիկտների դեպքում առավել ուշադիր լինել երեխաների հուզական ներաշխարհի կայունության պահպանման և ֆիզիկական զարգացման խնդիրներին: Աշխատանքային լարվածության պարագայում հարկավոր է միշտ և հնարավորինս շատ ժամանակ հատկացնել երեխաներին, միշտ պետք է հավատարիմ մնալ բարեկամական տոնայնությանը, անմիջապես արձագանքել երեխայի մոտ թեկուզ չնչին բացասական վարքագծի դրսևորումներին: Անհրաժեշտ է մշակել ներընտանեկան խնդիրները հմտորեն շրջանցելու տարբերակներ և հնարավորության դեպքում երեխային աննկատ կերպով ներգրավել այդ գործընթացում: Եթե կոնֆլիկտի մասին լռել և հմտորեն շրջանցել հնարավոր չէ, ապա պետք է անպայման երեխային ասել ճշմարտությունը և լուծումներ փնտրել նրա հետ միասին: Հարկավոր է երեխային զբաղեցնել հետաքրքիր ժամանցով և երբեք չաղավաղել նրա մանկական հիշողությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավանեսյան Հ. Մ. Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ, Երևան, 2021
2. Հարությունյան Ն. Ա. Ընտանիքի կայունության հոգեբանական հիմքերը: Մենագրություն, էդիթ Պրինտ, Երևան, 2018
3. Գալստյան Ա., Ստեփանյան Ռ., Հոգեդիագնոստիկա, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., 2012,
4. Գասպարյան Յ. Ա., Ժողովրդական ավանդույթներն ու սովորույթները հայ ընտանիքում, Ե., 2003
5. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: Ուրարտու համալս., 2010
6. Ընտանեկան բնությունները Հայաստանում, Ե., 2000
7. ՀՀ լուսավորչության նախարարության մանկավարժական գիտությունների գիտատեխնիկական ինստիտուտ Ընտանիքի հոգեբանություն, Ե., 1991
8. Նալչաջյան Ա., Մկրտչյան Ս., Ընտանիքի հոգեբանությունը, Ե., 2001
9. Антонов И., Социология семьи, М., 1996
10. Гиляров Е. М., Конфликтология, М., 1995
11. Макаренко А.С., О воспитании в семье, М., 1955
12. Brown, Michael E. & Richard N. Rosencrance, The Costs of Conflict: Prevention and Cure in the global arena, (Lanham, MD: Rowman and Littlefield Publishers, 1999)
13. Rothchild, Donald, S., “Third party incentives and the Phases of Conflict Prevention,” Donald S, in Lekham Sriram & Wermester (Ed.), International Peace Academy Press